

լով փարբ՝ սառւդեցին գէպքը, այնու-
հետեւ ամիսութեցին Սիօնի իրենց գե-
րեզմանատան մէջ :



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՆԱՏԱՄԱՐԵՑՑ

Գ. Ս. ԽԱՎԱՅԵԱՆ

ՅՈՒԽՏԵՆ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Սոյն դասագիրը պատրաստուած
է Ազգ. Դպրոցաց համար պարզ լե-
զուաւ և գիւրըմբռնելի եղանակաւ.
կը բաղկանայ 245 երեսէ. ունի երեք
տախտակ ձեւերու և կը վաճառուի ՚ի
գին 8 դրուշ մաքուր ստակ :

Դասագրքին պարունակութեան և
ընթացքին վերաց աւելի ամփոփ գա-
ղափար մի տալու համար, յառաջա-
քանը կը գնեմք ստակ :

Տիեզերագրութիւնը, որ կ'ուսուցանէ զլուառ-
քարար մեր մօլորակային դրութեան կազմութիւնը
և կը բացատրէ այն օրէնքները, պրով այս երկնա-
յին մարդինները, ընդ որու և մեր երկիրը երբեւ
մօլորակ, կը կառավարուին. կարեւոր ուսումներին
մին է, Հարկ չեմք տեսնել այս աեղ ընդարձակո-
րէն թուել անոր օգուտները և կարեւոր թիւնը.
բաւական է զիսնալ, որ այս ուսումնէն երկայ դա-
րուս սկիզբէն յառաջանդիմական մէծամեծ քայլեր
առաւ. տիեզերախօսական շատ ճշմարտութիւններ
պարզուեցան. բազմաթիւ և օգտակար զիւտեր
եղան. այս ամենը՝ ոսյն ուսման կարեւոր թեան
ապացոյներ են : Մարդը, որ առաջ զեմքը շրջա-
պատող երկնային երեւոյթներուն անսեղեակ էր,
և շատ անգամ բնական երեւոյթ մի շատ ազգեր
տգիտութեան պատճառաւ մեծ արհաւրանաց մէջ
կը ձգէր, այսօր չնորհիւ այս ուսման զիտէ և կը
մեկնէ այդ երեւոյթներուն պատճառը. զիտէ մօ-
լորակային գրութիւնը կազմող մարման և
տալլուրամական կազմութիւնը, զիտէ անոնց շաբ-

ճումներն և շարժմանց տիրող օրէնքները և զիտէ
վերջապէս նոցա իրարանշերին հեռաւորութիւնը
և մեծութիւնը : Ահաւատիկ համառօտիւ Տիեզե-
րագրութեան օգուաները :

Գիտառմիւն մի, երբ բաց ՚ի շոր ու ցամաք ծա-
նօթութիւններէ, կամ բաց ՚ի մասց զարգացումէ,
ու բաւականացներ մարդոյ սիրութ և ըլլուցաներ
նորա հոգին երկինային զմայլմամբ և զարմացմամբ,
՚ի կարեւորացն է. բաց աչ ՚ի կարեւորացունից :
Այս համեմատութեամբ աւելի պարզ կ'որոշուի
Տիեզերագրութեան միւս բնական ուսումներին ու-
նեցած գերազանցութիւնը, վասն զի ուսումնինէ
աւելի սրժանի մարդոյ խախմանց, աւելի ընդունակ
նորա սիրութ և հոգին լուցանելու երկիւղած զար-
մացմամբ և կրնական սուրբ զգացմամբ, քան հը-
րաշակառաց տիեզերաց. քան ուսումնն լուսա-
փեռ աստեղաց. որբ անդագար կը թաւալին մեր
գիւտան վերաց. ՚ի մի բան քան ուսումնն նրկինց.
որ ըստ Մարդութիւն Պատմեն ցփառու Աստուծոյ եւ
շարարածն ձեռաց նորա :

Այսու համարմամբ կը յօւսամբ թէ մեր ներկաց
աշխատութեամբ եթէ ոչ առաջնին, գննեան կարե-
ւոր և օգտակար գործ մի նուրիցիցինք ուսումնակը
Հայ—մանկառոյն : Թէեւ մեզմէ շատ առաջ այլք
խութացած են այս ծառայութեան մէջ, սակայն
մեր զիսաւոր չնախն եղած է աւելի նորագոյն եւ
կարեւորագոյն ծանօթութիւններով Տօնացնել եւ
կանոնաւոր ու բնական կարգաւ մի ուսումները դիւ-
րամատչելի ընել : Այս նորատակաւ՝ ուսման նիւ-
թին համեմատ վեց զլուխներու բաժնեցինք . առա-
ջն՝ Երկիրը զրինք, որ մեզ ամենամեծաւորն է
մեր բնակութեան տեղնէ, երկիրոդ՝ Հասաւոտուն
տաեցք, Երրորդ՝ Արեգակն՝ Հորրորդ՝ Լուսինը.
Հինգերորդ՝ Մոշորակացն գրութիւն, վեցերորդ՝
Տօնար, և ամենէն վեց զլուխը՝ քան և մէկ նորդիւնը
յաւելցուցինք ուսուանողաց կրթութեան համար նոյն
ինկ գասագրքն քաղաքած, զոր ուսումնողք առանց
ապուեստական Գունսի իրեւեթ օւստաբանիան խըն-
դիրներ պիտի լուծեն և Ամենն աւելի խնդրոց լու-
ծումն պիտի երաշխաւորէ ուսումնողաց վիճակը, վասն
զի երբ ուսման բռն ոգեցն ընել թափանցած, ան-
պատճառ պիտի տկարանան խնդրոց լուծման մէջ:
Առ այս կը խնդրեմք, որ նւսուցիչք առաջնորդ են
ուսումնողաց, գասագրքին մէջ շատ տեղեր միայն
թիւեր գրուած են առանց մննդանն հաշուց իր-
բեւ վերջնական արդիւնք, պէտք է որ ուսումնողք
իրնին փորձն գործողութեամբ անոնց ստուգու-
թիւնը :

Որչափ որ մեր այս գործը զանազան թերու-
թիւններէ զերծ չէ. սակայն կը յօւսամբ, որ Մեծ-
արգոյ նւսուցիչք պիտի ընդունին ներուղամիտ ոգ-
ուով և համակրութեամբ, որով ևթէ Հայ—մանկը
տին սակաւ ինչ օգտի, մեք՝ մեր աշխատութեան
վարձն ու պատկը լիովին ստացած կը ըլլամբ :